

Անահիտ ՇԱՀՄՈՒՐԱԴՅԱՆ
Երևանի պետական համալսարան

ԽՂՈՒ ԽԱՅԹԻ ՊՐՈՒԼԵՄԻ ԲԱՑԱՀԱՅՏՄԱՆ ՍԵԹՈՂԸ
«ԱՄԵՐԻԿԱՆ ԵՐԱԶԱՆՔԻ» ԿՈՆՏԵՔՍՏՈՒՄ ԿՈՒՐՏ
ՎՈՆԵԳՈՒՏԻ «ԱՍՏՎԱԾ ՉԵՉ ԱՌՈՂՁՈՒԹՅՈՒՆ ՏԱ,
ՊՐՆ. ՌՈՉՈՒՈՒԹԵՐ» ՎԵՊՈՒՄ

Կուրս Վոնեգուտի այս վեպի հերոսը մի մարդ է, ով վատատեսական տրամադրվածություն ունի «ամերիկյան երազանք» գաղափարի և առհասարակ Ամերիկայի ապագայի նկատմամբ: Այս հոդվածով փորձ ենք արել բացահայտելու, թե ինչու են համընդհանուր ընդունված արժեքները հակասում հերոսի բարոյական արժեհամակարգին ու սկզբունքներին: Պատճառահետևանքային հետադարձ կապով բացահայտել ենք հերոսի վարքագծի, կարեկցանքի ու սիրո անօրինաչափ դրսևորումների բուն շարժառիթը: Էլիոթը դեռևս պատերազմի տարիներին է կորցրել իր հոգեկան անդորրը. պատերազմ, ինչն ըստ հեղինակի չարիք է, համամարդկային աղետ և կորուստների պատճառ: Էլիոթը այսպիսով փորձում է վճարել իր և իր նախնիների սխալների համար:

Բանալի բառեր. «ամերիկյան երազանք», մարդասիրություն, խղճի խայթ, արժեհամակարգ, արժեքներ, պատերազմ, չարիք, խեղաթյուրված, հիշողություններ, կորուստ, ինքնասպանություն, գումար, մեղք, սեր, կարեկցանք

Այս հոդվածով փորձ է արված ուսանողին օգնել բացահայտելու վոնեգուտյան հերոսի վատատեսական տրամադրվածության պատճառն արդի արժեհամակարգի և Ամերիկայի հեռանկարի նկատմամբ:

20-րդ դարի ամերիկացի մի շարք գրողներ անդրադարձել են «ամերիկյան երազանք» հասկացությանը քննադատական տեսանկյունից: Նրանց ստեղծագործություններում մարդը ներկայացվում է որպես «ամերիկյան երազանքի» մի գոհ, որի իրականացման ճանապարհին մարդկային խիղճը հաճախ հանդիսանում է թիրախ: Այդ հասկացությունն իրենց վեպերում տարբեր տեսանկյուններից դիտարկել են Թեոդոր Դրայզերը, Ֆրենսիս Սքոտ Ֆիցջեյրալդը, Ջոն Սթայնբեքը, Թոմաս Վուլֆը և շատ ուրիշներ:

1. Փորձենք սահմանել, թե ինչ է իրենից ներկայացնում «ամերիկյան երազանքը» 20-րդ դարի ամերիկյան վիպասան, արձակագիր Կուրտ Վոնեգուտի տեսանկյունից:

Վոնեգուտյան վեպերում կարելի է տեսնել, թե ինչպես «ամերիկյան երազանք» գաղափարի թյուրըմբռնումը խաղասեղանի վրա է դնում մարդկային առաքինությունն ու պարկեշտությունը: Նրա «Աստված ձեզ առողջություն տա, պրն. Ռոզուոթեր» վեպում հանդիպում ենք հետևյալ արտահայտությանը. «Ամերիկյան երազանքը շրջված ստամոքսն ի վեր, կանաչեց՝ թեքված դեպի անսահման ազահության փրփրակալած մակերեսը, գազով լցված, պայթեց միջօրեին»: (Vonnegut, Jr., Kurt (1965). *God Bless You, Mr. Rosewater*. Holt,

Rinehart and Winston. “The American dream turned belly up, turned green, bobbed to the scummy surface of cupidity unlimited, filled with gas, went bang in the noonday sun”)

Այս վեպում արտացոլված են 20-րդ դարի ամերիկյան քաղաքացու խղճի տարատեսակ դրսևորումները: Հետպատերազմյան Ամերիկայի քաղաքացին ծառանում է ընթերցողի առջև իր խաթարված էությանը՝ ապրելով խաթարված արժեհամակարգում: Նույն ժամանակահատվածում ստեղծագործող ամերիկացի մեկ այլ գրող՝ Ջոն Սթայնբեքի ստեղծագործություններում տեսնում ենք միևնույն խնդիրների արծարծում, որոնց դիտարկման տեսանկյունը բավական մոտ է նրա գրչրկեր Կուրտ Վոնեգուտի մտածելակերպին: Սթայնբեքի վեպերում առկա է «ամերիկյան երազանքի» նմանատիպ դիտարկում՝ որպես մարդկանց մոլորեցման մի պատճառ, ինչը ի վերջո հանգեցնում է մարդկային արժեհամակարգի աղճատմանը: Սակայն, եթե, օրինակ, «Մեր հոգսերի ձմեռը» վեպի հերոս Իտեն Ալլեն Հոուլին փորձում է պայքարել այդ խաթարված հասարակության արժեհամակարգի դեմ՝ չընդունելով նրա պայմանները բոլորից հնարավորինս հեռու մնալու միջոցով, ապա «Աստված ձեզ առողջություն տա, պրն. Ռոզուոթերե վեպի հերոս Էլիոթ Ռոզուոթերը փորձում է հարցին լուծում տալ ներսից՝ ամբողջությամբ ընկղմվելով առաջադրված խնդիրների մեջ:

Թերևս Էլիոթ Ռոզուոթերը քաջ գիտակցում է, որ հասարակությունը հիվանդ է մեծից մինչև փոքր, աղքատից մինչև հարուստ, սակայն, միևնույնն է, **շարունակում է սեր և կարեկցանք բաշխել անխտիր բոլորին՝ փորձելով լռեցնել իրեն տանջող խղճի ձայնը:** Նա շարունակում է շահագործել իր մարդասիրության պաշարները՝ ձգտելով օրինակ ծառայել մյուսների համար: Իր կյանքը զոհաբերելով այդ հասարակության ցածր խավի կարիքների բավարարմանը՝ նա այդպես փորձում է առաջարկել մի ուտոպիստական լուծում ամերիկյան ժամանակակից չարիքների՝ խաբեության, փողամոլության, անբարոյականության, ազահության դեմ՝ ինքն էլ գիտակցելով, որ **այնուամենայնիվ ի գորու չէ ոչինչ փոխելու, որ չարիքը հաճախ ծնվում է հենց այդ մարդկանցից, որ իր արարքը արդյունքում չի գնահատվելու:** Կարծես հերոսը հայտնվում է մի անլուծելի պարադոքսալ իրավիճակում: Իզուր չէ, որ վեպի ամբողջական վերնագրի մեջ ակնարկվում է «Նոր Կտակարանից» մի հայտնի հորդոր, որը պարունակում է երկիմաստ նախազգուշացում. «Մի՛ տվեք սրբությունը շներին. և ձեր մարգարիտները խոզերի առաջ մի՛ գցեք, որպեսզի դրանք ոտքի կոխան չանեն և դառնալով ձեզ չպատառոտեն»: (Նոր Կտակարան, Ավետարան ըստ Մատթեոսի, «Մի՛ դատիր», Է: 6) Նշենք, որ վեպի ամբողջական վերնագիրը հետևյալն է՝ **«Աստված ձեզ առողջություն տա, պրն. Ռոզուոթեր, կամ մարգարիտներ խոզերի առջև»:** (God Bless You, Mr. Rosewater; or, Pearls before Swine – **Vonnegut, Kurt.** Published by Jonathan Cape, London 1965)

Ահա և Էլիոթի գործողությունների անհեթեթության ակնարկը թվում է, թե նա գոնե բարիք է գործում հանուն զուտ բարիքի, սակայն դա այդպես չէ:

2. Եթե վոնեգուտյան հերոսը գիտակցում է իր ընտրության անհեթեթությունը, ապա անհրաժեշտություն է առաջանում հասկանալ, թե որն է նրա մարդասիրական գործողությունների բուն դրդապատճառը:

Այս հարցին ճիշտ մեկնաբանություն տալու համար անհրաժեշտ է անդրադառնալ կրտսեր Ռոզուտերի անցյալի հիշողություններին և հատկապես առանձնացնել պատերազմի մասին պատմող տեսարանները: Պատերազմի ժամանակ առերեսելով անողորմ մահը՝ Էլիոթը գիտակցում է, որ բոլորն են հավասար մահվան առջև: Նա փորձում է ընթանալ գետի հոսանքին հակառակ՝ կոտրելով սահմանված կարծրատիպերը, որոնք մարդուն բաժանում են մարդուց: Իր անխտրական մարդասիրությամբ Էլիոթը հույս ունի, որ կփոխի ինչ-որ մի բան՝ գուցե օրինակ դառնա նրանց համար, ովքեր իշխանություն ունեն մյուսների վրա: Նշենք, որ, Էլիոթի մարդասիրական առաջընթացի տեսանկյունը լիովին տարբերվում է կյանքի ստորոտում հայտնված մարդկանց մասին իր հոր կարծիքից: **Սա նորի ու հնի, սերունդների միջև եղած տեսակետների այն մշտնջենական բախումն է, որը խանգարում է հասարակության առաջընթացին:**

Ակնհայտորեն մարդկանց օգնելը այն միակ կյանքի իմաստն է, որը ստիպում է նրան շարունակել ապրել: Պետք է հասկանալ, թե ինչից և ինչպես ծագեց Էլիոթ Ռոզուտերի հոգեկան դատարկությունը: Հետադարձ հայացք ձգելով Էլիոթի անցյալի վրա և ուսումնասիրելով նրա հիշողությունների պատառիկները՝ հասկանում ենք, որ նա այդ կերպ վարվելով փորձում է հատուցել անցյալում իր կատարած մեղքի, մարդասպանության համար: **Պատերազմն է իր անջնջելի դրոշմը դրել Էլիոթի կյանքի վրա, այժմ նա կորուսյալ սերնդից մեկն է, ով այլևս ի գորու չէ վերադառնալ նախկին կյանքին:** Էլիոթը շատ լավ գիտակցում է, որ փորձում է օգնել խաբեբաների և ավազակների, որ ինչ էլ անի կամ չանի, այդպիսիք միշտ էլ ապրելու և բազմանալու են երկրի երեսին, սակայն նա իր պարտքն էր համարում վերադարձնել նրանց կորցրած երազանքի գոնե մի մասը: **Պատերազմի ժամանակ սպանելով տասնչորսամյա երիտասարդին՝ նա այդպես էլ չի վերագտնում իր հոգեկան անդորրը:** Իսկ ինչքան երազանքներ դեռ ուներ այդ երիտասարդը... Էլիոթն այդ դեպքից հետո պարզապես հետաձգում է իր ինքնասպանությունը: Չմոռանանք այն չհաջողված ինքնասպանության փորձը, որը անմիջապես հետևեց իր ճակատագրական դարձած հերոսական մղմանը: Հեղինակն առաջարկում է մտածել, թե ինչ է իրենից ներկայացնում այդ հերոսությունը. իհարկե՞ նորից սպանություն, պարզապես թիրախը պետք է լինեին այլ մարդիկ, որպեսզի պատերազմն օրինականացներ այն ու պարզևատրեր մարդասպանին: Հերոսության միանման «բացահայտում» տեսնում ենք նաև «Մեր հոգսերի ձմեռում», որտեղ գրքի հերոսն այն կոչում է իր իրական անունով՝ **մարդասպանություն:**

3. Որո՞նք են հեղինակին հուզող հիմնական խնդիրները, որոնք արտացոլված են այս վեպում:

2003 թվականին, Կուրտ Վոնեգուտը երրորդ Հումանիստական մանիֆեստի («*Humanism and Its Aspirations*», *Humanist Manifesto III*) հիմնադիրներից մեկն էր: Նա մարդասիրությունը համարում էր ազատ մտածողության ժամանակակից մի ձև, ինչը արտահայտվել է նրա տարբեր գրվածքներում, ելույթներում և հարցազրույցներում: Նա իր գործունեությամբ կապված էր հումանիստական կազմակերպված շարժման հետ, «մարդասիրության դափնեկիր» էր: 1992 թվականին Ամերիկյան հումանիստների կազմակերպությունը /ԱՀԿ/ նրան անվանեց տարվա մարդասեր: Այս կազմակերպության անդամներին ուղղված իր նամակում նա գրում է. "I am a humanist, which means, in part, that I have tried to behave decently without expectations of rewards or punishments after I am dead." (Humanist President, Kurt Vonnegut, Mourned American Humanists Association Press Release, April 12, 2007, քարգմ. «Ես մարդասեր եմ, ինչը մասամբ նշանակում է, որ ես աշխատել եմ քաղաքավարի լինել առանց հետմահու պարգևատրումների կամ պատիժների ակնկալիքների»)

Հեղինակը «Աստված ձեզ առողջություն տա, պրն. Ռոզուտեր» վեպում ամերիկյան արժեհամակարգի խարխլման կոնտեքստում արժարժում է ևս մի խնդիր՝ **մարդու ռեալիզացման խնդիրը**: Այտեղ ներկայացված հարուստ մի շարք ընտանիքների ժառանգներից և ոչ մեկը երջանիկ չէ, նրանք կարծես ինչ-որ բանից խորապես հիասթափվել են, կորցրել իրենց կյանքի իմաստը՝ հայտնվելով նույնիսկ ինքնասպանության շեմին: Պատճառն այն է, որ **այս մարդիկ խորապես գիտակցում են, որ իրենք չեն վաստակել այն գումարները, որ այսօր վայելում են, և մյուսների համեմատությամբ իրենց առավելությունը թվացյալ է, նրանք ապրելու համար ոչինչ չեն անում, պարզապես գոյատևում են**: Վեպում հանգամանորեն պատմվում է, թե ինչպես են այդ ժառանգների նախնիները ժամանակին չարաշահել մյուսների վատահոլությունը և հասել հարստության: 20-րդ դարի ամերիկացի շատ հեղինակների, ինչպես, օրինակ, հենց Ջոն Սթայնբեքի ստեղծագործություններում («Դրախտից արևելք», «Մեր հոգսերի ձմեռը», «Յասման ողկույզներ» և այլն) նույնպես բազմիցս կարելի է հանդիպել այն մտքին, որ հսկայական կարողությունները հենց այնպես չեն ստեղծվում: Դրանք ժամանակին ինչ-որ մութ գործի, ինչ-որ մեկին վնասելու արդյունք են: **Վոնեգուտը այս վեպում բացահայտում է ամերիկյան երազանքի «փտած հիմքը»**՝ ընթերցողին ներկայացնելով Նոյ Ռոզուտերի խաբեությանը հարստություն դիզելու պատմությունը, ով պատրաստ էր նույնիսկ իր հարազատ եղբորից խլել նրա հասանելիք ժառանգությունը: Հեղինակն ակնարկում է, որ այդ ճանապարհով դիզված հարստությունը երբեք չի կարող սերունդներին ի բարօրություն ծառայել, կգա մի օր, և այն ըստ արժանվույն կգտնի իր իսկական տերերին. Դրանք ամերիկացիներն են, ովքեր ոչ մի բանով վատը չեն և թերևս և ոչ էլ լավն են Ռոզուտերներից կամ Ռոկֆելլերներից: Գրքի շատ հատվածներում Վոնեգուտը պարզ կերպով տալիս է իրեն անհանգստացնող թեմաների նկարագիրը, անդրադառնում այնպիսի հարցերի, ինչպիսիք են **ռասիզմն ու անհավասարությունը** Ամերիկայում:

4. Ո՞րն է մարդկանց հիմնական շարժառիթն ու խթանը, նաև՝ «Ամերիկյան երազանքի» խորհրդանիշը վեպում:

Վստահորեն կարելի է ասել, որ **գլխավոր կերպարը այս վեպում փողոն է**, այն ներկայացվում է որպես հակամարդասիրական մի միջոց, մի ուժ, ինչպիսին դրա կրողներն են՝ Ռոզուտթերներն ու Ռոկֆելլերները, չնայած ակնհայտ է, որ գրեթե ցանկացած մարդու այն կարող է փոխել դեպի վատը, դրդել անմարդկային արարքների: Այդպիսին է «ամերիկյան երազանքի» ձգտողների ասպազան, ովքեր չեն կարողանում իրատեսորեն ընկալել իրավիճակն ու ըստ արժանվույն գնահատել իրենց կարողություններն ու հնարավորությունները:

«Ամերիկյան երազանք» տերմինն առաջին անգամ կիրառել է ամերիկացի պատմաբան Ջեյմս Թրուսլոու Ադամսը իր 1931 թ. Հրատարակված «Ամերիկայի դյուցազներգությունը» գրքում՝ նկարագրելով Ամերիկայում գոյություն ունեցող բարդ համոզմունքները, կրոնական խոստումներն ու քաղաքական-սոցիալական ակնկալիքները: Իր աշխատության մեջ նա սահմանում է, թե ինչ է իրենից ներկայացնում «ամերիկյան երազանքը», և շեշտում է, որ այն պարզապես հարստության կամ նյութական առատության ձգտումը չէ, այլ ինքնակայացման մի հեռանկար է: Ցավոք, ինչպես պատկերված է վեպում, սոցիալ-տնտեսական իրականությունը թույլ չի տալիս շատ ամերիկացիների հասնելու իրենց երջանկությանը, ինչի իրավունքը նրանք բոլորն էլ ունեն, ինչպես նշված է ԱՄՆ-ի անկախության դեկլարացիայում (The Declaration of Independence: A Transcription. “The unanimous Declaration of the thirteen united States of America”, IN CONGRESS, July 4, 1776. “We hold these truths to be self-evident, that all men are created equal, that they are endowed by their Creator with certain unalienable Rights, that among these are Life, Liberty and the pursuit of Happiness”):

5. Վեպի գլխավոր հերոսի նախատիպը:

Նշենք, որ վեպում ներկայացված հերոսի ընկճախտը ունի ինքնակենսագրական հիմքեր: Այդտեղ ներկայացված հերոսի վերապրումները իրական են եղել հեղինակի համար. թե՛ մեղքի զգացողությունից տառապող Էլիոթը, թե՛ ինքնասպանության մասին մտածող Ֆրեդը, թե՛ միայն ճիշտը պատմող Թրաուսը՝ երեքն էլ հեղինակի ես-ի տարբեր դրսևորումներն են, կյանքի խնդիրներին տարբեր տեսանկյունից դիտող ամերիկացիների նախատիպեր, ովքեր չգիտեն, թե ինչպես ինքնառեալիզացվեն ամերիկյան արդի հակամարդասիրական պայմաններում: **Էլիոթի տառապանքի հիմնական պատճառը սեփական մեղքի գիտակցումն է**, ինչը նա տարածում է նաև իր նախնիների վրա, կարծես մեղադրում նրանց այսօրվա Ամերիկայի համար: Վեպում հնչում է մի կարծիք. խղճի խայթը «չարիք» է, ինչից պետք է ձերբազատվել: Օրինակ՝ հերթական ժառանգ Սթյուարթ Բանթլայնը ևս տառապում էր այդ հիվանդությունից: Երիտասարդ տարիքում գիտակցելով, որ ինքը ժառանգել է մեծ գումար և հասկանալով, որ այդքան գումար իրեն հարկավոր չէ, որոշում է

մարդասիրաբար տնօրինել այն, սակայն, «աչալուրջ» փաստաբանը ժամանակին «կանխում» է խղճի այդ դրսևորումը:

6. Որո՞նք են հեղինակի առաջարկած լուծումները, ո՞րն է հասարակության «բուժման» տարբերակը:

Անհրաժեշտ է, մի նոր բարեփոխված «ամերիկյան երազանք», որը կշեշտադրի ոչ նյութական արժեքների կարևորությունը: Սրան են ձգտում վոնեգուտյան շատ հերոսներ: Մինչև վերջ վեպի հերոսը՝ Էլիոթ Ռոզուոթերը, հույս է տածում, որ վստահությամբ ու սիրով պատասխանելով Ռոզուոթեր քաղաքի բնակիչների հերթական ստին ու ստոր արարքին՝ կարող է ինչ որ բան փոխել: Գուցե կարող է: Կիլգոր Թրաուֆի շուրթերով խոսում է հեղինակը՝ ասելով, որ անկեղծ սերն ու կարեկցանքը կփրկեն բոլորին, դրա կարիքն ունեն մարդիկ: Մինչ այս վերջին եզրակացությունը այն խղճի զգացողությունը, որ արթնացել էր Էլիոթի մեջ, բոլորի կողմից դիտարկվում էր որպես հիվանդություն, վարակ, ինչը հարկավոր էր բուժել. դա մի հիվանդություն է, որը ծագում է հսկայական կարողություն ժառանգած երիտասարդների մոտ, ում խիղճը դեռ արթուն է, և ովքեր քաջ գիտակցում են, որ ժառանգել են շատ ավելին, քան կարող են ծախսել իրենց ամբողջ կյանքի ընթացքում: Այդ հիվանդության բուժման մի քանի եղանակ կա, սակայն երբ այն արդեն խորացել է, մնում է միայն մի վերջին հանգրվան՝ հոգեբուժարանը: Եվ Էլիոթը քաջ գիտակցում է այդ մասին, նա գիտի, թե որն է փոխհատուցման արժեքը: Իսկ իրական հերոսներն ըստ Էլիոթի, հրշեջներն են, ովքեր նետվում են կրակների մեջ՝ փրկելու մարդկային կյանքեր՝ առանց խտրականության: Այդ կրակների միջոցով է, որ հերոսը ապարդյուն փորձում է մաքրվել իր մեղքից, ուզում լռեցնել իր խղճի ձայնը աշխատելով նաև որպես հրշեջ. հուրն է, որ պիտի լափիլզի մեղքը, մեղսավորներին, ...ամբողջ Ինդիանապոլիսը.

-Ավտոբուսի աթոռից վեր բարձրանալով՝ Էլիոթը դիտում էր Ինդիանապոլիսը լափող կրակի տարափը...Նրա ներսում վառվող կարմիր մոխրե մանր կտորները հաղթանակած ու սահուն պտտվում էին կուրացնող-սպիտակ հիմքի շուրջ (Vonnegut, Jr., Kurt (1965). *God Bless You, Mr. Rosewater*. Published by Holt, Rinehart New York, 1965):

Ամփոփելով նշենք, որ թեև մեղքի գիտակցումն է, որը ստիպում է Էլիոթին իր արարքներով տարբերվել ուրիշներից, ձգտել սոցիալական հավասարության, այնուամենայնիվ ոչ բոլորին է դա տրված: Էլիոթը հասկանում է, որ Ռոզուոթեր քաղաքի բնակիչները բոլորն էլ ժամանակին ինչ-որ կերպ մասնակցել են իր նախահայր Նոյի հարստության ստեղծման գործընթացին, ուրեմն արդարացիորեն պիտի կիսեն այդ հարստությունը: Վեպի վերջում այս որոշումը ներկայանում է որպես լիակատար հաղթանակ «ամերիկյան երազանքի» մոլուցքի նկատմամբ, երազանք, որը խեղաթյուրում է մարդկային արժեքները՝ ստիպելով թալանել, ստել, կործանել:

Կիլգոր Թրաուֆի հետևյալ խոսքերը ամերիկյան հասարակության փրկության Վոնեգուտյան բանալին են.

-...*Էլիոթ Ռոզուոթերի օրինակի շնորհիվ միլիոնավորներ գուցե կտվորեն սիրել մերձավորներին, օգնել բոլորին, ովքեր այնքան զգում են այդ օգնության կարիքը* (Vonnegut, Jr., Kurt (1965). *God Bless You, Mr. Rosewater*. Published by Holt, Rinehart New York, 1965):

Նշենք նաև, որ **Էլիոթի արարքով վեպում բացահայտվում է առաքինության, խղճի արթնացման ժառանգականության թեման**։ Էլիոթն այդ վեհ գիծը ժառանգել էր իր նախնի, պատերազմի վետերան Նոյ Ռոզուոթերի եղբայր Ջորջ Ռոզուոթերից, ով լինելով լիիրավ ժառանգորդ հրաժարվեց պայքարել հարստության համար՝ թողնելով ամեն ինչ եղբորը, կամ գուցե՝ այն վաղեմի նախահայր Ջոն Գրեհենից, ով սերում էր հարուստ անգլիական արիստոկրատ ընտանիքից, սակայն իր գաղափարների համար թողեց ամեն ինչ, նույնիսկ՝ հայրենի Անգլիան և սկսեց մի նոր կյանք։

Արյունը ջուր չի դառնում, մի օր այն խոսում է: Ուրեմն դեռ հույս կա վերականգնելու մարդկային արժեհամակարգը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Vonnegut Jr. K. *God Bless You, Mr. Rosewater*. New York: Holt, Rinehart and Winston, 1965.
2. Նոր Կտակարան, Ավետարան ըստ Մատթեոսի, «Մի դասիր», է : 6:
3. Vonnegut Jr. K. *God Bless You, Mr. Rosewater; or, Pearls before Swine*. London: Published by Jonathan Cape, 1965.
4. Vonnegut Jr. K. *Humanism and Its Aspirations // Humanist Manifesto III*, 2003.
5. Vonnegut K. *Mourned American Humanists Association Press Release* 04.12, 2007.
6. *The Declaration of Independence: A Transcription*. “The unanimous Declaration of the thirteen united States of America”, IN CONGRESS, July 4, 1776.

А. ШАХМУРАДЯН – Методика раскрытия проблемы угрызения совести в контексте «американской мечты» в романе Курта Воннегута «Дай вам бог здоровья, мистер Розуотер». – Герой романа Элиот Розуотер превращается в человека, скептически настроенного против «Американской мечты» и будущего Америки. В статье автор пытается выяснить, почему общепринятые человеческие ценности противоречат моральным ценностям и принципам героя. Путем ретроспективного анализа причин и последствий, выясняется истинная мотивация поведения героя, проявления его сочувствия и любви к окружающим.

Ключевые слова: «Американская мечта», раскаяние, система ценностей, война, зло, искаженная психика, воспоминания, потеря, самоубийство, деньги, грех, любовь, сочувствие

A. SHAHMURADYAN – *The Method of Revealing the Problem of Remorse in the Context of the “American Dream” in “God Bless You, Mr. Rosewater, or Pearls before Swine” by Kurt Vonnegut.* – In the novel “God Bless You, Mr. Rosewater” the protagonist turns into a person skeptically predetermined for the “American Dream” and the future of America. In this paper, an attempt is made to reveal the reason why the moral values and principles of the protagonist are to collide with the generally accepted system of values. By means of a retrospective study of cause and consequences, we try to reveal the real motivation of Eliot’s behavior, the unprecedented expiration of love and compassion towards others.

Key words: “American Dream”, humanism, remorse, values, consequences, war, evil, distorted psychic condition, memories, loss, suicide, money, sin, love, compassion